

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/2

7 մայիսի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 23.04.2013թ-ի նիստում քննության է առնվել <Գուլդենոդ> ՍՊԸ 11.04.2013թ. գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 13.03.2013թ-ի թիվ 2120224 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 11.02.2013թ-ի թիվ 2120224 հանձնարարագրի <Գուլդենոդ> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որն ընդգրկել է 30.08.2000թ-ից մինչև 04.03.2013թ. ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 13.03.2013թ-ին կազմվել է թիվ 2120224 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 160.000 դրամ:

<Գուլդենոդ> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

սույն թվականի հունվարից մինչև վարչական ակտ կազմելու օրը՝ մարտի 13-ը, ստուգում իրականացրած տեսուչների կողմից ոչ մի ապացույց չի ներկայացվել իմ կողմից առամնաբուժական ծառայության մատուցման վերաբերյալ:

2013թ-ի հունվարի 16-ին և 17-ին դադարեցման դիմումը և հայտարարությունը Կենտրոնի ՀՏ սպասարկման բաժին ներկայացնելուց և նրանց կողմից մուտքագրելուց հետո պահանջեցին ՀԴՄ-ի հաշվառումից հանելու հայտ ներկայացնել և հանձնել: Կենտրոն ՀՏ-ի սպասարկման բաժնի աշխատակցուհին իմ ներկայությամբ անմիջապես ստուգեց ՀԴՄ-ն, վերծանեց ֆիսկալային ժապավենը և համոզվեց հունվարի 14-ին խփված 10.000 դրամ արժողությամբ մեկ կտրոնի առկայության մասին: Ինձ կանչեցին երկրորդ հարկ: Աշխատակիցը չցանկացավ ծանոթանալ մանրամասներին: Այդ 10.000 դրամի մասին հայտարարության բովանդակության առաջին նախադասությանը սխալմամբ գրել եմ հետևյալ ձևով՝ <... կազմակերպությունը իրականացնում է առամնաբուժական գործունեություն ...>, որը գրված է ներկա ժամանակով, այն դեպքում, երբ դրան նախորդող օրը գրել էի գործունեության դադարեցման դիմում, իսկ նույն օրը գործունեության դադարեցման հայտարարություն: Հայտարարությունում պետք է նշվեր <... իրականացրել է ...>, քանի որ դրա իմաստը վերաբերվում է այդ 10.000 դրամ արժեքով կտրոնին: Հայտարարությունը կնքված չի եղել ընկերության կնիքով: Իմ կողմից չի ներկայացվել սպասարկման բաժին մուտքագրման: Սխալը մատնացույց չի արվել, ինձ հնարավորություն չի ընձեռվել շտկելու: Ես դադարեցրել եմ գործունեությունը հունվարի 16-ին և 17-ի դիմում, հայտարարություն ներկայացնելով սպասարկման բաժին: Փաստորեն, այդ 10.000 դրամի մասին գրված հայտարարության բովանդակության մեջ քերականական սխալ է եղել: Ակտում նույնպես նշված է այդ քերականական սխալը:

Ստուգման առաջին օրը՝ փետրվարի 20-ին, տեսուչին հարցրել եմ ընկերության կարգավիճակի մասին: Հետո ասել եմ հետևյալը՝ գործունեությունը դադարեցված է, ծառայություն հունվարին չեմ մատուցել, գրել եմ առարկություններ: Նշել եմ իմ կողմից դադարեցման պատճառը և այդ 10.000 դրամի վերաբերյալ հայտնել տեղեկություններ: Փաստում եմ, որ կարգավիճակի մասին տեղեկություն եմ ստացել Կենտրոն ՀՏ մարտի 6-ին տեղեկանքի բովանդակությունից, որտեղ գրված է՝ կարգավիճակը գործող է: Դրանից հետո փորձել եմ սպասարկման բաժնում պարզել իմ կողմից հունվարի 16-ին և 17-ին հանձնված դադարեցման դիմումի, հայտարարության ճակատագրի մասին, և թե ինչու է կարգավիճակը մնացել է գործող: Աշխատակիցները փնտրել են հարկային գործի փաստաթղթերի մեջ, բայց

չեն գտել: Սպասարկման սրահից զանգահարել են տեսուչ Ս.Սահակյանին և պարզել, որ դրանք նրա թղթապանակում են: Հունվարին և հաջորդ ամիսներին հաշվետվություններ չեն ներկայացրել, կարծելով, որ կարգավիճակը Կենտրոնի ՀՏ կողմից դադարեցված է:

Համաձայն «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի և 3-րդ կետի 3-րդ ենթակետի, 24-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի 3-րդ մասի՝ հարկային տեսուչն ուղղակի շահագրգռված է գործի ելքով, շահագրգռված է նյութապես, հիմնավոր կամ անհիմն ակտ կազմելուց կազմողը ստանում է դրամական փոխհատուցում, այսինքն՝ անաչառ լինել չի կարող:

«Վարչարարության հիմունքների և վաչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի համաձայն՝ նման հանգամանքների առկայության դեպքում ստուգում իրականացնողը բացարկի ենթակա է: Փաստացի օրենսդրությամբ ամրագրված է ստուգում իրականացնողի անաչառ լինելու հանգամանքի բացառումը: Ակտում նշված բոլոր հանգամանքները և փաստերը չեն համապատասխանում իրականությանը:

Աշխատանքի ընթացքում կատարել են իմ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները: Թե ինչու է մերժվել գործունեությունը ժամանակավոր դադարեցման հունվարի 16-ի, 17-ի դիմումը, հայտարարությունը մինչ այժմ ինձ անհայտ է: Իսկ եթե հարկային պարտավորություններ են ունեցել, ապա ինչու պատշաճ չեն տեղեկացվել: «Հարկերի մասին» օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է՝ «Որևէ տեղեկություն հիմք չի հանդիսանում հարկ վճարողի հարկային պարտավորության հաշվարկման և գանձման համար, քանի դեռ նա հնարավորություն չի ունեցել ծանոթանալ դրան և տալ համապատասխան բացատրություններ»:

Միայն մարտի 6-ին են տեղեկացել, որ կարգավիճակը գործող է: Ոչ մի գրություն չեմ ստացել, պատշաճ չեմ ծանուցվել այդ մասին: Վարչական վարույթ հարուցված է եղել, թե ոչ նույնպես տեղյակ չեմ: Եթե հարուցված է եղել, ապա ինչու ես որպես մասնակից չեմ ծանուցվել:

Ընկերությունը խնդրում է չեղյալ համարել Կենտրոնի ՀՏ-ն կողմից կազմված 13.03.2013թ. թիվ 2120224 ակտը, ակտում նշված գրավոր հայտարարությունը: Որոշում կայացնել գործունեության ժամանակավոր դադարեցման մասին հունվարի 16-ին և 17-ին ՀՏ ներկայացված դիմումի և հայտարարության հիմքով: Միջնորդել, որ գործի քննության ընթացքում Կենտրոնի ՀՏ կողմից ներկայացվեն վարչական վարույթի և գործի հետ կապված փաստաթղթերի բնօրինակները: Ընկերությունը խնդրում է նաև ստուգման ակտի համար վճարված 160.000 դրամը հաշվանցել շահութահարկի հաշվեհամարին:

«ՀԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

«Գոլդենոդ» ՍՊԸ-ն ք.Երևան, Նալբանդյան 25/14 տ. 21 հասցեում իրականացնում է ատամնաբուժական ծառայության մատուցման գործունեություն 1 բազկաթոռի միջոցով, սակայն 2013թ-ի հունվար ամսվա համար ՀՏ չի ներկայացրել 1 աշխատատեղի վերաբերյալ արտոնագիր: Հունվար ամսին ընկերությունը մատուցել է ծառայություն 10.000 դրամ արժեքով, համաձայն տնօրենի գրավոր հայտարարության: Արդյունքում «Գոլդենոդ» ՍՊԸ-ի կողմից հունվար ամսվա համար պակաս արտոնագրային վճար է հաշվարկվել՝ գումարով 80.000 դրամ: Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի, արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 160.000 դրամ:

Քննարկվող դեպքում «Գոլդենոդ» ՍՊԸ-ի կողմից 2013թ-ի հունվար ամսին մատուցվել է ատամնաբուժական ծառայություն, սակայն նույն ժամանակահատվածի համար հարկային տեսչություն չի ներկայացվել մեկ աշխատատեղի վերաբերյալ արտոնագիր:

Ընկերության կողմից 2013թ-ի հունվար ամսին ատամնաբուժական ծառայություն մատուցված լինելու փաստը հիմնավորվել է հսկիչ-դրամարկղային մեքենայից դուրս բերված ֆիսկալային հաշվետվությամբ, ինչպես նաև ընկերության տնօրենի կողմից 17.01.2013թ-ին տրված գրավոր հայտարարությամբ: Մասնավորապես, 17.01.2013թ-ի հայտարարությունում ընկերության տնօրենը նշել է, որ սույն թվականի հունվար ամսին հաճախորդի համար իրականացրել է մեկ ատամնաբուժական ծառայություն, որի համար վճարվել է 10.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ընկերության կողմից խախտվել են <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները, որի համաձայն. <Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում սույն օրենքի N 7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս երեք ամսվա) համար սույն օրենքի N 8 հավելվածով սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով>:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵԴՅԱՆ